դնել հակառակ նկատած քաղաքացիների վերաբերմամբ, թալանեցին պետական գանձատունը, պահեստները և մասնաւոր քաղաքացիների բնակարանները: Ցեղաշրջման օրը քաղաքից հեռացած իշխանութիւնը, օգնական ուժեր ստանալով, մայիս 19-ին վերադարձաւ քաղաքը, և ազատ արձակեց բանտարկեալներին: Կուի ժամանակ սպանուեցին 2 խռովարարներ և վիրաւորուեցին 3· կառավարական զօրքերից սպանուեց 1 հոգի և վիրաւորուեց 2: Բռնուեց և պարագլուխ Սարուխանեանը, որը միւս ձերբակալեալների հետ յանձնուեց արտակարգ դատարանի:

Այսպիսով, երկու շաբաթուայ ընթացքում կառավարութիւնը ամբողջ երկրում վերջ տուեց ապստամբական շարժման: Հայաստանից փախած բոլշևիկները մեծ իրարանցում առաջ բերին Ադրբէջանում· դիմումներ արին 11-րդ բանակին, հեռագիրներ քաշեցին Մոսկուա՝ ջանալով ամենքին հաւատացնել, որ Հայաստանում կոմունիստների կոտորած է կատարւում և որ արդէն սպանուած են հազարաւոր մարդիկ: Միաժամանակ, ադրբէջանեան իշխանութեան օգնութեամբ Ղազախի շրջանում հաւաքուեցին հայ ու մալական փախստականներից խմբեր և պատրաստւում էին յարձակուելու Հայաստանի վրա: Մայիս 21-ին, երբ ապստամբութիւնն արդէն ամէն տեղ համարւում էր ընկճուած, յանկարծ, Ղազախի կողմից, կարմիր դրօշակներով, առաջ շարժուեցին բոլշևիկեան ուժեր և առանց կուի մտան Իջևան: Եկողներին միացան և որոշ քանակութեամբ տեղացիներ: Զօրքը չդիմադրեց: Բոլշևիկները ձերբակալեցին ներքին գործոց նախարարի օգնական Սարգիս Մանասեանին, զօրքերի հրամանատար զօր· Բաղդասարեանին, Իջևանի գաւառի ինքնավարութեան նախագահ Ն.Զաղէթեանին, Մ.Սարատիկեանին և ուրիշ պաշտօնեաներ ու սպաներ և աքսորեցին Բաղու: Ապա անցան Դիլիջան և առանց արգելքի հանդիպելու գրաւեցին քաղաքը: Սակայն, շուտով օգնութեան հասան կառավարական զօրքեր ու կամաւորական խմբեր, որոնք, զինուած ժողովրդի հետ միասին, յարձակուեցին թշնամու վրա, որը խուճապով դիմեց փախուստի՝ թողնելով սպանուած իր պարագլուխ Ցակորջանեանին: Այս առթիւ կուսակցութիւնները բաց թողին հետևեալ հաւաքական կոչը·

«Հայաստանի քաղաքացինե՛ր, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարըղամիշի, Նոր-Բայազէտի խռովութիւններին հետևեց Դիլիջանի գաւառը: Ներքին ոճրագործ տարրերի պետական դաւաճանութեան յաջորդեց արտաքին նոյնօրինակ տարրերի անհանդուրժելի արշաւանքը դէպի մեր երկրի խորքերը:

Մեր հայրենիքի ներքին ու արտաքին թշնամիները միացած՝ դիւային ծրագիրներ են որոճում Հայաստանի ազատութեան և անկախութեան դէմ: Հայ ժողովուրդը, որի ինքնորոշուած կամքի մարմնացումն է կազմում իր պետական անկախութիւնը, պիտի արթուն պահապանի նման փայփայի ու պաշտպանի իր այնքա՜ն թանգ գնով նուաճած ազատութիւնն ու անկախութիւնը:

Թո՛ղ հայ քաջարի բանակը սուրը ուխտի երդումը տայ կազմ ու պատրաստ դիմադրաւելու համար Հայաստանի անկախութիւնը բոլոր թշ-